# Մեդիագրագիտություն



- Ուսուցիչ՝ Արմինե Դարբինյան
- Գեղարքունիքի մարզ, Մարտունու ավագ դպրոցի ուսուցիչ

# Մեդիագրագիտությունը ինֆորմատիկայի դասաժամին

**Դասարան՝ 11-րդ**

# Դասի նպատակներն ու խնդիրները

**Նպատակը՝**

- Զարգացնել համացանցի ապահով ու արդյունավետ օգտագործման հմտություն և սովորողների մոտ խթանել վերլուծական և քննադատական մտածողություն:
- Արժևորել և գնահատել համայնքահեն ներդրումները
- Զարգացնել սոցիալական ինքնաճանաչողական կարողունակությունը

**Խնդիրները՝**

- Խմբային աշխատանքի միջոցով ամրապնդել աշակերտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները ապահով համացանցի և դրա արդյունավետ օգտագործման համար:

# Դասի վերջնարդյունքները

**Վերջնարդյունքը՝**

- Իրականացնի անհրաժեշտ տեղեկույթի արդյունավետ որոնում համացանցում, վերլուծի, քննարկի տեղեկույթը և կիրառի իր աշխատանքներում:
- Տարբերակի վնասակար և ոչ պատշաճ բովանդակության տեղեկույթը, կարևորի համացանցի հնարավոր ռիսկերից պաշտպանվելու անհրաժեշտությունը:
- Ստեղծի մեդիա բովանդակություն համայնքի մարդկանց, նրանց գործունեության, պատմամշակութային վայրերի, սովորույթների, ավանդույթների վերաբերյալ և գիտակցի իր տեղն ու դերը համայնքի զարգացման գործում:

# Դասի ընթացքը




- Դասի նպատակի և վերջնարդյունքների սահմանում
- Մտագրոհ/ Ի՞նչ ասել է լինել մեդիագրագետ
- Սահիկի ներկայացում /Ինչպես գտնել անհրաժեշտ տեղեկությունները և քննադատորեն վերլուծել մեդիա ուղերձները
- Խմբերի ձևավորում
- Քննարկում /«Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, կիսի՛ր գաղափարներդ» մեթոդի կիրառմամբ
- Մտքերի քարտեզագրում, խմբավորում/ Աշխատանքի բաժանում
- Գործնական աշխատանքի իրականացում
- Ուղղորդված աշխատանք տանը

# Գործնական առաջադրանք



- **Առաջադրանք / ըստ ընտրության**

**1. Հավաքիր տեղեկույթ համայնքի նշանավոր մարդկանց մասին, ստեղծի մեդիա բովանդակություն նրանց գործունեության մասին:**

**2. Հավաքիր տեղեկույթ պատմամշակութային վայրերի, սովորույթների, ավանդույթների վերաբերյալ, ստեղծիր մեդիաբովանդակություն, համայնքում զբոսաշրջությունը զարգացնելու համար:**

# Գործնական աշխատանքի իրականացում
# Թիմային աշխատանք



Աշակերտները ինֆորմացա են հավաքագրում համայնքի մարդկանց, նրանց գործունեության, պատմամշակութային վայրերի, սովորույթների, ավանդույթների վերաբերյալ:

- Արժևորում են համայնքաբնակ անհատների կենսագործունեությունը, ներդրումը համայնքի զարգացման գործում:
- Սահմանում ուղենիշներ համայնքի բարեկարգման եւ կենսական պայմանների բարելավման համար:
- Տեսահոլովակի ստեղծում առկա մշակութային և տնտեսական բաղադրիչները համայնքի համատեքստում:

# Տնային առաջադրանք

Ուսուցիչի կողմից լրացուցիչ տեղեկատվական աղբյուրների տրամադրում և աշխատանքի շարունակության հանձնարարում տանը

- Իմ համայնքի թաքնված անկյունները, իմ սիրելի վայրերը, իմ համայնքի նշանավոր մարդիկ
- Քննարկում ժամանցի բացակայության հիմնախնդիրների, նախաձեռնողականության մասին:
- Տեսահոլովակի ու բուկլետների ստեղծում առկա մշակութային և տնտեսական բաղադրիչները համայնքի համատեքստում:

# Անդրադարձ հաջորդ դասին

- Արված աշխատանքների ներկայացում

Վերլուծական աշխատանք ըստ հետևյալ բաղադրիչների՝

- Հեղինակը/պատվիրատուն
- Ուղերձները
- Օգտագործված հնարքները
- Նյութի դրական ազդեցությունը
- Որքանով է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ
- Հեղինակի մոտ կա արդյոք ինֆորմացիայի պակաս

# Ամփոփում

- Հարցումների և հետազոտության արդյունքում տեսահոլովակի, բուկլետների կազմում և տրամադրում համայնքի անդամներին՝ պատմամշակութային վայրերի, սովորույթների, ավանդույթների և համայնքի նշանավոր մարդկանց մասին:



# Օգտագործված գրականություն.

- 21-րդ դարի հմտություններ `https://docs.google.com/presentation/d/1VucthqXasxiO_CwrcQwHd_oVAqttlgvK/edit#slide=id.p4`
- ԿԶՆԱԿ հիմնադրամ
- #ՄեդիաԱկումբՄարտունուԱվագԴպրոց

# Շնորհակալություն

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

